

ԳԱՅԱՆԵ ՄԿՐՏՈՒՄՅԱՆ

«ՍԱՍՆԱ ԾՌԵՐ» ԷՊՈՍՈՒՄ ՅՈԹ ՏԱՐՎԱ ԽԱՐԱՋԻ ՊԱՏՄԱԿԱՆ
ԱԿՈՒՆՔՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՓՈՐՁ՝ 652Թ. ՀԱՅ-ԱՐԱՐԱԿԱՆ
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԴԻՏԱՐԿՄԱՍԲ

DOI: 10.24234/journalforarmenianstudies.v2i73.257

ԱՄՓՈՓՈՒՄ

«Սասնա Ծռեր» էպոսը հայ ժողովրդի ազգային վիպերգությունն է, որն իր մեջ ամփոփում է նրա կենսական մեծ ուժը, հերոսական մաքառումների պատմությունը, որը ձգվել է դարեր ի վեր, պայքարը թշնամու դեմ՝ հանուն ազատության ու անկախության: Էպոսի առաջին պատումներից մեկը տպագրվել է 1874թ. Գ. Սրվանձադյանի կողմից, այն բաղկացած է 4 ճյուղերից, որոնցից յուրաքանչյուրը կոչվել է տվյալ ճյուղի գլխավոր հերոսի անունով՝ «Սանասար և Բաղդասար», «Մեծ Մհեր», «Սասունցի Դավիթ», «Փոքր Մհեր»: «Սասունցի Դավիթ» ճյուղում առասպելաբանորեն և վիպականորեն վերարտադրված են 7-րդ դարի 2-րդ կեսից մինչև 13-րդ դարի քառասնական թվականներն ընկած ժամանակահատվածի պատմական դեպքերը, այդ թվում՝ հայ ժողովրդի պայքարը Արաբական խալիֆայության հարկային քաղաքականության դեմ, որի համատեքստում էլ մեր կողմից ուսումնասիրվել է մասնավորապես Սասունի բնակիչներից Մսրա Մելիքի հրամանով յոթ տարվա խարաջի հարկման մասին թեման: Վերջինս, ակներևաբար, ունի պատմական հիմք և իր արմատներով կապված է 652թ. Հայոց իշխան Թեոդորոս Ռշտունու (639-654) և Ասորիքի կուսակալ Մուավիա իբն Աբու Սուֆյանի (639-661) միջև կնքված պայմանագրի հետ: Հոդվածի շրջանակներում համառոտ անդրադարձ է կատարվել 7-րդ դարի 2-րդ կեսին դեպի Հայաստան արաբական արշավանքների ընթացքին, արաբ զավթիչների դեմ Հայոց իշխան Թեոդորոս Ռշտունու մղած պայքարին և գործունեությանը, որի ակտիվ ջանքերի շնորհիվ կնքվեց 652թ. պայմանագիրը: Մեծ

ժողովրդականություն վայելող Թեոդորոս Ռշտունին դարձել է «Սասնա ծռեր» էպոսի կերպար՝ ի դեմս Քեռի Թորոսի կամ Թնա Թորոսի: Հայ, ասորի և արաբ պատմագիրների հաղորդած տեղեկությունների հիման վրա հոգվածում հետազոտվել են 7-րդ դարի 2-րդ կեսից սկսած հայ ժողովրդի մղած պայքարը արաբների դեմ, ինչպես նաև 8-9-րդ դարերում բռնկված Սասունի ու Տարոնի ապստամբությունները, որոնք արտացոլվել են էպոսում: Սկսած 9-րդ դարից

Ջուզահեռաբար էպոսում տեղ գտած դրվագները, երբ Մսրա Մելիքի հարկահանները Սասուն են հասնում յոթ տարվա չհարկված խաբաջը գանձելու համար, լուսաբանվել են 652թ. պայմանագրի պայմանի շեշտադրմամբ, որով հայերը երեք տարով ազատվում էին Խալիֆայությանը հարկեր վճարելուց: Հոգվածը նպատակ ունի հետազոտելու և վերլուծության ենթարկելու հայ մի շարք հետազոտողների ու պատմաբանների դիտարկումները պայմանագրի կնքման թվականի ու հայերի՝ երեք տարով հարկերից ազատ լինելու պայմանի վերանայման շուրջ՝ այն սահմանելով յոթ տարվա միջակայքում:

***Բանալի բառեր և արտահայտություններ.** յոթ տարվա խաբաջ, 652թ. պայմանագիր, Սասունի և Տարոնի ապստամբություններ, Մսրա Մելիք, Հայոց իշխան, արաբ հարկահավաքներ, Ս. Մարութա վանք, Մեքենուի պատմության ձեռագրեր, հայկական էպոս, հարկային քաղաքականություն:*

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Արաբական նվաճումների նախօրյակին Հայաստանը բաժանված էր Սասանյան Պարսկաստանի և Բյուզանդական կայսրության միջև: 639թ. Հայոց իշխան Թեոդորոս Ռշտունուն հաջողվեց միավորել Հայաստանի պարսկական ու բյուզանդական մասերը, որը դարձավ ինքնուրույն իշխանապետություն (**Հայ ժողովրդի պատմություն, 1984**): Բյուզանդական կայսրությունը ի վիճակի չէր պայքարել արաբների դեմ և նրանց հետ կնքել էր չհարձակման պայմանագիր՝ հարկ վճարելու պայմանով: Հայոց իշխան Թեոդորոս Ռշտունին, հայտնվելով նման բարդ իրավիճակում և կազմակերպելով մի շարք հարձակումներ արաբական ջոկատների դեմ, հասկացավ, որ ինքն ի վիճակի չէ միայնակ երկիրը պաշտպանել արաբների հարձակումներից և դիմեց վճռական քայլի՝ բանակցությունների մեջ

մտնելով Ասորիքի կուսակալ Մուսավիայի հետ: Նրանց միջև կնքված պայմանագրի տեքստը հիշատակված է 7-րդ դարի պատմագիր Սեբեոսի պատմության մեջ: Պայմանագիրը կնքվեց 652թ., որի համաձայն Հայաստանը 3 տարով ազատվում էր Արաբական խալիֆայությանը հարկեր վճարելու պարտավորությունից և ժամկետը լրանալուց հետո միայն պետք է վճարեր արքունի հարկը, որի չափը հայերը պետք է որոշեին: Հայերը նաև պետք է ունենային 15-հազարանոց հեծելազոր, որն ամեն տեղ կարող էր մասնակցել մարտերին, բացի Ասորիքից: Իրենց հերթին Արաբական խալիֆայությունը պարտավորվում էր պաշտպանել Հայաստանը Բյուզանդական կայսրության հարձակումներից, չմիջամտել Հայաստանի ներքին գործերին, երկրի բերդերում արաբ զինվոր չտեղակայել (**Պատմութիւն Սեբեոսի, 1979**): Հայաստանը պայմանագրով ստանում էր ինքնավարություն, ապահովում երկրի անվտանգությունը, հայ նախարարները պահպանում էին իրենց ժառանգական հողատիրական իրավունքները (**Մելիք Բախշյան Ս., 1960**): Այս պայմանագիրը ոչ միանշանակ ընդունվեց հայ հոգևորականության կողմից, Սեբեոսի բնորոշմամբ «Եղին ուխտ ընդ մահու և դժոխքից դաշինս կոեցին Թեոդորոս Ռշտունեաց տեր ամենայն իշխանաւքն Հայոց» (**Պատմութիւն Սեբեոսի, 1979**): Թեոդորոս Ռշտունու գլխավոր հակառակորդը Ներսես Տայեցի կաթողիկոսն էր (641-661). «Եկեղեցականաց կողմը Ներսես կաթողիկոսի գլխաւորութեամբ միշտ կրօնական տեսակէտը ամուր բռնելով, հոգով չափ մը խորշէր իսլամական մերձաւորութենէն, մինչ նախարարները Թեոդորոս սպարապետի գլխաւորութեամբ որևէ կերպով ապահովութեան վիճակ մը կը փնտռեին առանց իսլամութիւնը ընդունելու» (**Օրմանյան Մ., 2001**): Ըստ հայ հայտնի պատմաբան Ա. Տեր-Ղևոնդյանի դիտարկման՝ պայմանագրի կնքումով Թեոդորոս Ռշտունին «հայկական պետականության շահերը ավելի բարձր դասեց, քան խախուտ բարեկամությունը քրիստոնյա նենգ կայսրության հետ» (**Տեր-Ղևոնդյան Ա., 1996**): Հետագայում Թեոդորոս Ռշտունին 652թ. պայմանագիրը վերահաստատելու հույսով 1800 հայ ազնվականների հետ որպես պատանդ մեկնեց Դամասկոս, որտեղ և վախճանվեց: 652թ. պայմանագիրը, սակայն, Հայաստանի վերջնական նվաճումն արձանագրող փաստաթուղթը չէր, այն կնքելուց հետո արաբական զորքը շարունակեց իր

ասպատակությունները Հայաստանում: Ըստ միջնադարյան մի շարք աղբյուրների՝ 654թ. արաբները գրավեցին Հայաստանում մի շարք գյուղեր և քաղաքներ, հաշտության պայմանագրեր տալով բնակչությանը (**Ibn al-Athir, III, 1977**): Երբ 661թ. հաստատվեց Օմայանների հարստությունը, Մուավիան հրովարտակ ուղարկեց հայերին, պահանջելով հարկ վճարել, տարեկան 600 դահեկան չափով (**Ղևոնդ, 1982**): Թեոդորոս Ռշտունին իր ճկուն պետականամետ քաղաքականությամբ հայ ժողովրդի անվտանգ գոյությանը, ազգային ինքնության պահպանելուն միտված ջանքերի շնորհիվ խոր հետք է թողել հայ ժողովրդի պատմական հիշողության մեջ և դարձել «Սասնա Ծռեր» էպոսի վիպական կերպարներից մեկի՝ Քեոի Թորոսի կամ Թևա Թորոսի նախատիպը:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Հոդվածում ուսումնասիրության ենթարկված վերոհիշյալ թեման շարադրված է գլխավորապես հայերեն և արաբերեն սկզբնաղբյուրների, թեմայի հետ կապված գրականության հենքի վրա, որոնք համադրվել, համեմատվել, վերլուծվել են միմյանց հետ զուգահեռաբար: Ըստ այդմ՝ հոդվածում կիրառվել են պատմահամեմատական, համադրական, վերլուծական մեթոդները:

ՔՆՆԱՐԿՈՒՄ

«Սասնա Ծռեր» էպոսում առանցքային տեղ է գրավում և արտացոլված է հայ ժողովրդի հերոսական պայքարը արաբների հարկային քաղաքականության դեմ՝ 750-751 թթ. և 851թ. սասունցիների ապստամբությունները Արաբական խալիֆայության դեմ: 750-751 թթ. Սասունի ապստամբությունը լուսաբանվել է 8-րդ և 13-րդ դարերի ասորական աղբյուրներում՝ ըստ որոնց 750-ական թթ., երբ Օմայանների օրոք Սասուն գավառը գտնվում էր Զազիրա փոխարքայության կազմի մեջ, տեղի կառավարիչը հարձակվեց Սասունում գտնվող Խուլփ գավառի վրա՝ ձերբակալելով տեղի մեծամեծերին, մահ ու ավեր սփռելով: Լեռնականները դիմեցին ինքնապաշտպանության՝ իրենց համար ղեկավար ընտրելով Հովհանին (Հովհան որդի Դուդայի): Վերջինս սպանեց արաբ կառավարչին՝ պարտության մատնելով նրա ջոկատին: Նրան հաջողվեց փրկվել ձերբակալությունից, ազատել լեռնականներին և վերադառնալ Սասուն (**Chronique de Denys de Tell Mahre, 1895**;

Տեր-Ղևոնդյան Ա., 2003): 9-րդ դարի 1-ին կեսին հայոց իշխան Բագարատ Բագրատունու իշխանության տարիներին Հայաստանը վայելում էր ներքին ինքնավարություն: Այս շրջանում հայկական գավառների բնակչությունից հարկերը հավաքվում էին հայ նախարարների հսկողության ներքո, և ոչ արաբ հարկահանների: Ընդ որում, 9-րդ դարի արաբ պատմագիր Ահմադ ալ-Բալազուրին հիշատակում է, որ հայ նախարարները արհամարհում էին Արմինիա փոխարքայության արաբ ոստիկանի հրամանները, ու եթե այդ ոստիկանը թույլ էր, հրապարակավ արհամարհում էին (**Al-Baladhuri, 1983**): Տուրքերը հավաքելու համար Հայաստան ուղարկված արաբ հարկահավաքները շուտով անհաջողության մատնվեցին: 851թ. Հայաստան ուղարկված ոստիկան Յուսուֆ իբն Աբուսեթը, գրավելով ամբողջ Հարավային Հայաստանը, գերեվարեց հայոց իշխան Բագարատ Բագրատունուն և ուղարկեց Սամառա՝ խալիֆայի մոտ: Նրա որդիները՝ Աշոտն ու Դավիթը (վիպական Դավիթ) ազատվեցին և ապաստան գտան Խույթի լեռնականների մոտ: Նրանք Բագարատ Բագրատունու եղբայր, իշխան Թոռնիկի որդի Խույթի տեր Հովնանի (Խուրեցի Հովնան) առաջնորդությամբ գրոհ կազմակերպեցին արաբների վրա՝ ջախջախելով նրանց: Ապստամբներից մեկին հաջողվեց աշտեով սպանել Յուսուֆին, որը թաքնվել էր Բագարատ Բագրատունու կառուցած Ս. Փրկիչ եկեղեցու գմբեթի ներսում (**Թովմա Արծրունի և Անանուն, 1985**): Համաժողովրդական ապստամբությունը ճնշելու և Յուսուֆի վրեժը լուծելու համար Հայաստան ուղարկվեց թուրք վարձկաններից կազմված մի ջոկատ Մեծ Բուղայի (ալ-Քաբիր) գլխավորությամբ: Եվ ինչպես նկարագրում է 12-րդ դարի հայ մատենագիր Սամուել Անեցիին «Իսկ չարագոյնն Բուխայ, եկեալ բազում զաւրովի չարագործէն Ջափրայ յաշխարհս Հայոց, վրիժախնդիր սպանմանն Ապուսիթայ, եւ աղետս եւ հալածանս եւ վիշտս սպանման հասոյց ամենեցուն, մանաւանդ ազատաց եւ հեծելագունդ զաւրաց» (**Սամուել Անեցի, 2011**): Արաբները հարձակվեցին ապստամբների վրա՝ երկարատև մարտերից հետո գերեվարելով իշխան Բագարատ Բագրատունու ազգականներին, նրա 2 որդիներին՝ Աշոտին և Դավիթին, գերի վերցվեց նաև Խուրեցի Հովնանը, սրի քաշվեցին ապստամբության մասնակիցները: Ինչպես վկայում է 10-րդ դարի պատմագիր Հովհաննես

Դրասխանակերտցին իր պատմության մեջ, «գավառի ռամիկ հեծելագնդից ոմանց սրի էին քաշում, ոմանց ձերբակալելով ու պարանով քարշ տալով՝ հասցնում էին բռնակալի մոտ»: (**Հովհաննես Դրասխանակերցի, 1996**): Փաստենք, որ Սասունում ու Տարոնում կատարվող պատմական այս եղելություններն արտացոլվել են նաև արաբական միջնադարյան պատմագրության մեջ: 9-րդ դարի արաբ պատմագիր Ահմադ ալ-Բալազուրին, իր երկում անդրադառնալով վերոհիշյալ դեպքերին, հիշատակում է, որ ալ-Մութավաքքիլ խալիֆան Հայաստանի կառավարիչ էր նշանակել Յուսուֆ իբն Մուհամմադ ալ-Մարվազիին, որը, Հայաստան արշավելով, ձերբակալեց պատրիկ Աշոտի որդի Բագրատին՝ ուղարկելով Սամառա (**Արաբական աղբյուրներ, 2005**): Հետո նա նկարագրում է, թե ինչպես գավառական կառավարիչներից մեկը՝ ալ-Ալյա իբն Ահմադը գնաց Սիսականում¹ գտնվող Սկիհների վանքը (ալ-Աքթահ), գրավեց այն՝ կողոպտելով այն և բռնության ենթարկելով վանականներին (**Al-Baladhuri, 1983**): Դրանով նրանք զայրացրեցին նախարարներին, որոնք էլ դրդեցին Արտան² անունով հայտնի խութեցիներին՝ ապստամբելու Յուսուֆի դեմ և սպանելու նրան (**Արաբական աղբյուրներ, 1981**): Պատմական այս դրվագները իրականում կատարվել են Սասունում և Տարոնում: Դրանք արտացոլվել են «Սասնա Ծռեր» էպոսի Դավթի ճյուղում, երբ Դավիթը վերաշինում է Ս. Մարութա վանքը և Մսրա Մելիքը, իմանալով այս մասին, իր հարկահավաքներին՝ Զուդին, Զուս Բադին, Կոսդին Կոս Բադին ուղարկում է Մարութա վանքը քանդելու, կողոպտելու և վանականներին բռնության ենթարկելու: Էպոսի գրեթե բոլոր պատումների մեջ «Բադին», «Բադիկ» անունը «կուզ», «խոզ» և այլ մականուններով է: Վեպն այդ անվան մեջ միավորել է բոլոր

¹ Մ. Աբեդյանը, անդրադառնալով արաբ պատմագրի երկում հիշատակված Սիսական (Սիսաջան արաբ.) տեղանվանը, նշում է, որ այն սիսալ գրության և թյուր ընթերցանության հետևանք է և որ վերոհիշյալ դեպքերը տեղի են ունեցել Տարոնում ու Սասունում (**տե՛ս Աբեդյան Մ., 1936**)

² Ալ-Բալազուրիի պատմության մեջ աղավաղված են Աքտահ (Սկիհների վանք) և Արտան տերմինները, որոնք ստուգել, ուղղել և մեկնաբանել է գերմանացի հայտնի հայագետ Յ. Մարկվարտը՝ նկատի ունենալով տեքստաբանական վերլուծությունները, կատարվող դեպքերի պատմաաշխարհագրական միջավայրը: Սասնա Խութի շրջանի մեջ էր մտնում նաև Մարութա սարը՝ իր Մարութա բարձր Աստվածածին վանքով՝ որպես հայտնի ուխտատեղի: Ըստ Մարկվարտի՝ Աքտահ վանքը Մարութա վանքն է, իսկ բնակիչների անունը՝ Արտան՝ Մարութայի հետ է ասոցացվում (**տե՛ս Markwart, 1930**)

հարկահաններին ու վանքն ավերողներին (**Աբեղյան Մ., 2013**): Կարծում ենք, որ Մարութա վանքի ավերումը էպոսում պատմական Սկիհների վանքի ավերման, կողոպտելու ու վանականներին բռնությունների ենթարկելու մասին հիշողությունն է կամ պատմական անդրադարձը: Էպոսում նկարագրվում է, թե ինչպես Մսրա Մելիքի հարկահանները ներխուժում են վանք՝ սպանելով այն հսկող պահապաններին, այնտեղ գտնվող թվով քառասուն վարդապետներին, տերտերներին և սարկավագներին: Նրանք կողոպտում են վանքի ոսկին ու արծաթը, որպես ավար իրենց հետ տանելով << վանքի մալ, տավար, գառ, օչխար, ցորեն, գարի, ձեթ, մում>> (**Սասունցի Դավիթ 1977**): Էպոսում Սասուն հարկերի հավաքման համար ուղարկված Կոզբաղինը իրականում պատմական Դիարբեքիր Էմիր Բադ ալ-Քուրդի ամիրան է, որն օգտվելով 10-րդ դարում Բյուզանդական կայսրությունում ծագած խռովություններից, գրավեց Խլաթի, Արճեշի, Տարոնի շրջանները՝ ստեղծելով խոշոր տերություն: Ըստ Ստեփանոս Տարոնեցու՝ նա վերականգնել է ավերված Մանագկերտը, ավերել Տարոնի գավառը, գրավել Մուշը և կոտորել տեղի եկեղեցու սպասավորներին (**Ստեփանոս Տարոնեցի Ասողիկ, 2000**): Էպոսում Կոզբաղինը Սասուն էր եկել Մսրա Մելիքի հրամանով՝ հարկելու սասունցիներից յոթ տարվա չվճարված հարկը՝ խարաջը³, նա Հովնանին դիմելով ասում է. որ եկել են հարկելու Մսրա Մելիքի հրամանով <<յոթ տարվա խարաջ,... քառասուն ջվալ ցորեն, գարի,...քառասուն էրկեն ու կարճ կնիկ,...քառասուն սիրուն ախչիկ...քառասուն մատղաշ տղա>> (**Սասունցի Դավիթ, 1977**): Այստեղ ինչպես տեսնում ենք, գանձվող հարկերի ցանկում բացի նյութական առարկաներից՝ գարուց, ցորենից, անասուններից, եղել են նաև «քառասուն էրկեն ու կարճ կնիկ, քառասուն սիրուն ախչիկ, քառասուն մատղաշ տղա» (**Սասնա Ծռեր, 2008**): Նկատենք, որ ըստ արաբ պատմագիրների վկայությունների՝ արաբ զինվորները գերեվարում էին գեղեցկատես աղջիկների, վայելչակազմ տղաների, հավանաբար, նրանց դավանափոխ անելու և որպես ստրուկներ շուկաներում վաճառելու համար: Ալ-Բալազուրին հիշատակում է, որ Դադստանի լեզգիների (Սարիր)

³ Խարաջը հողահարկն է, սկզբնապես նշանակել է ամեն տեսակի հարկ և տուրք հպատակներից և օգտագործվել է որպես գլխահարկի հոմանիշ (տե՛ս Ислам. Энциклопедический словарь, 1991)

գորահրամանատարը արաբ Մրվան գորավարի հետ հաշտության պայմանագիր կնքեց՝ պարտավորվելով խալիֆայի կառավարչին «տարեկան հազար հինգ հարյուր տղա, հինգ հարյուր սևահեր, սևահոն, երկար արտևանունքներով և բարեկազմ աղջիկներ մատուցել և Բաբի (Դերբենդ) հացահատիկի շտեմարան բերել հարյուր հազար հացահատիկ» (**Արաբ մատենագիրներ, 2005**): Այսպես, անդրադառնալով էպոսում հիշատակված Մասունի բնակիչներից գանձվելիք 7 տարվա խարաջի պայմանին, նշենք, որ այն, ճիշտ է, բառացիորեն չի հիշատակվում հայկական կամ արաբական միջնադարյան աղբյուրներում, սակայն օժտված է պատմականությամբ, քանի որ վերջինս ենթադրում է ոչ թե ժամանակագրական հաջորդականության տրամաբանությամբ զարգացող իրականությունը, այլ պատմական իրադարձությունների արձագանքը, մի արձագանք, որը էպոսում ստանում է պատմությունից միանգամայն տարբեր ժամանակագրություն, այսինքն 7 տարվա խարաջի հիմքում դրվում է 652թ. պայմանագրի վերոհիշյալ պայմանը, որով հայերը երեք տարով ազատվում էին հարկ վճարելուց՝ «ոչ առնում ի ձենջ սակ զերեամ մի»: Այն Սեբեոսի պատմության հնագույն ձեռագրերի մեջ հիշատակվում է «վեր է ամի» ձևով, սակայն №3122 ձեռագրի լուսանցքում հարցականով գրված է «զերեամ մի» (**Պատմութիւն Սեբեոսի, 1979**): Այս արտահայտության տարբերակները տարբեր մեկնաբանությունների տեղիք են տվել հետազոտողներին. Սեբեոսի պատմության հ+րատարակիչ Ք. Պատկանյանի օգտագործած ձեռագրի մեջ եղել է «զերեամ մի», որը նա թարգմանել է գրաբարից «երեք տարի շարունակ», մինչդեռ պատմության մյուս հրատարակիչը՝ Թ. Միհրդատյանը ձեռագրերի «վեր է» բառի մեջ տեսել է թուրքերեն «վերկի» տերմինը, որը հայերենում «սակ» իմաստն ունի, իսկ «վեր է»-ի վերջին տառն ընկալել է որպես յոթ թվանշան և ստացել է «ոչ առնում ի ձենջ սակ (վերկի) է ամի», որի համաձայն հայերը յոթ տարով ազատվում էին հարկեր վճարելուց: Թ. Միհրդատյանի կողմից առաջ քաշած այս տարբերակն ընդունել են մի շարք հայտնի հայագետներ, պատմաբաններ, ինչպիսիք են Հ. Հյուբշմանը, որը, իմանալով, որ Ք. Պատկանյանի կողմից օգտագործված Ասիական թանգարանի ձեռագրում գրված է «զերեամ մի», նախապատվությունը տվել է Թ. Միհրդատյանի

տարբերակին և հաստատել, որ յոթ տարին ավելի հավանական է թվում, քան երեք տարին (**Hubshman H., Geshichte Armenians und erste Kriege Araber, 1875**): Համենայն դեպս, հայ պատմաբաններն ու ուսումնասիրողները՝ Լեոն, Մ. Օրմանյանը ևս կարծում են, որ հայերը յոթ տարով են ազատվել հարկեր վճարելուց: Մ. Օրմանյանը հիշատակում է, որ պայմանագրով հայերը պետք է հպատակվեին արաբներին՝ պայմանով, որ «առայժմ ապահարկ մնալ եօթը տարի ետքը սակ կամ հարկ տալ, որչափ որ կամենան» (**Օրմանյան Մ., 2001**) և հղում է Սեբեոսին: Պայմանագրի թվականի և վճարվելիք հարկի ժամկետի հետ կապված բոլոր դիտարկումները ուսումնասիրության ենթարկելով՝ հետազոտողները գտնում են, որ վերոհիշյալ պայմանագիրը կնքվել է 651թ., երբ արաբները գրավեցին Պարսկաստանն ու Միջին Ասիան: Ըստ այդ դիտարկումների՝ 652թ. Բյուզանդիայի Կոստանդ կայսրը, (641-668) իմանալով Թեոդորոս Ռշտունու կողմից կնքված այս պայմանագրի մասին, արշավում է Հայաստան, 653թ. Օսման խալիֆայից զորք ստանալով՝ Թեոդորոս Ռշտունին բյուզանդական զորքին դուրս է մղում Հայաստանից: Ինչպես վկայում է Սեբեոսը, այդ ժամանակ Ներսես Գ Տայեցի կաթողիկոսը, որը միաբանվել էր Կոստանդ կայսեր հետ, մեկուսանում է և բնակություն հաստատում իր ծննդավայր Տայքում (**Պատմութիւն Սեբեոսի, 1979**): Ըստ պատմաբան Հ. Հարությունյանի դիտարկման՝ 651 թվականին կնքված այդ դաշնագիրը յոթ տարով է եղել, և դա երևում է նրանից, որ յոթ տարին լրանալուց հետո Թեոդորոս Ռշտունին նորից է մեկնել Դամասկոս՝ այդ խնդրի կարգավորման համար, սակայն հիվանդացել է և մահացել այնտեղ (**Հարությունյան Հ., 1940**): Ըստ նրա առաջ քաշած տարբերակի՝ հայոց սպարապետը 658թ. է մեկնել Մուավիայի մոտ, որը ուղիղ յոթ տարի է: Միայն նրա մահից հետո է Ներսես կաթողիկոսը վերադարձել իր պաշտոնին:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ամփոփելով կարող ենք ասել, որ «Սասնա Ծռեր» էպոսում Սասունի բնակիչներից հարկվելիք յոթ տարվա խարաջը ունի փաստական ամուր հիմք, որի պատմական ակունքների ուսումնասիրության մեջ մեր դիտարկմամբ առանցքային նշանակություն ունի 652թ. հայ-արաբական դաշնագիրը՝ կնքված Հայոց իշխան

Թեոդորոս Ռշտունու և Ասորիքի կուսակալ Մուավիա իբն Աբու Սուֆյանի միջև: Թեմայի հետ կապված՝ պայմանագրում կարևորվել է հայերի՝ Խալիֆայությանը երեք տարով հարկ չվճարելու պայմանը: Թեմայի ուսումնասիրության շրջանակներում անդրադարձ է կատարվել նվաճված երկրներում Աբբասյան խալիֆայության հարկային ծանր քաղաքականությանը, որն առաջ բերեց 9-րդ դարում Սասունի և Տարոնի ապստամբությունները արաբ հարկահանների դեմ: Պատմական այս իրադարձությունները հետազոտվել են՝ համադրելով հայ, արաբ և ասորի պատմագիրների հաղորդած տեղեկությունները, որոնք էլ արտացոլվել են էպոսում: Հոդվածում առանձնացվել է սասունցիներից հարկվելիք յոթ տարվա խարաջի պայմանը՝ ըստ որի, բացի նյութական բարիքներից Մսրա Մելիքը պահանջում էր իրեն ծառայելու համար ուղարկել «քառսուն սիրուն ախչիկ», «քառսուն մատղաշ տղա», «քառսուն էրկեն կնիկ», և ինչպես քննարկումից պարզ դարձավ, նմանատիպ պայմանները, ըստ արաբական միջնադարյան աղբյուրների, առկա են եղել արաբ գորահրամանատարների կողմից նվաճված երկրների բնակչությանը տված պայմանագրերում: Ուստի կարելի է պնդել, որ էպոսում յոթ տարվա խարաջը հենց արաբական աղբյուրներում հիշատակված նմանատիպ պայմանագրերի կամ պայմանների մասին պատմական հիշողությունն է: Վերլուծվել են թեմայի շրջանակներում Սեբեոսի պատմության ձեռագրերը՝ ըստ իրենց հրատարակիչների դիտարկումների, կապված հայերի՝ Խալիֆայությանը երեք տարով հարկ չվճարելու պայմանի վերանայման հետ, ինչպես նաև պայմանագրի կնքման թվականի վերաբերյալ պատմաբանների ու հետազոտողների առաջ քաշած տարբերակները՝ ըստ որոնց հարկի գանձումը և պայմանագրի կնքումը վերջիններս տեղադրել են յոթ տարիների միջակայքում, որ պայմանագիրը կնքվել է 651թ. և այն պիտի վերահաստատվեր 658թ.: Այս ուսումնասիրությունը ամենևին էլ միտում չունի վիճարկելու 652թ-ի պայմանագրի կնքման թվականի պատմական հավաստիությունը: Այսպիսով, կարելի է պնդել, որ «Սասնա Ծռեր» էպոսում սասունցիներից հարկվելիք յոթ տարվա խարաջը 652թ. հայ-արաբական դաշնագրի պատմական հիշողությունն է, և վերոհիշյալ եզրահանգումները մեկ անգամ ևս փաստում են այդ իրողությունը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Աբեղյան Մ. (2013)**, Երկեր, հատ. Ա, Երևան, ԵՊՀ հրատ.:
2. **Արաբական աղբյուրներ (1981)**, Իբն-Ալ-Ասիր /Թարգման., առաջաբանը և ծանոթ. Արամ Տեր-Ղևոնդյանի/, հ. Բ., Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ.:
3. **Արաբական աղբյուրներ (2005)**, Արաբ մատենագիրներ, Թ-Ժ դարեր /Ներած. և բնագրից թարգմ. Արամ Տեր-Ղևոնդյանի/, հ. Գ., Երևան, Երևանի համալսարանի հրատ.:
4. **Թովմա Արծրունի և Անանուն (1985)**, Պատմություն տանն Արծրունեաց, Երևան, Երևանի համալսարանի հրատ.:
5. **Հայ ժողովրդի պատմություն (1984)**, հատ. 2, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ.:
6. **Հարությունյան Հ. (1940)**, Սեբեոս եպիսկոպոսի պատմության մեջ եղած մի պայմանագրի ժամկետի ճշտման հարցի շուրջը, Գիտական աշխատություններ, հատ. 1, Երևան, Երևանի մանկավարժական ինստիտուտի հրատ., էջ 199-206:
7. **Հովհաննես Դրասխանակերտցի (1996)**, Հայոց պատմություն, Երևան, ԵՊՀ հրատ.:
8. **Ղևոնդ (1982)**, Պատմություն, Երևան, «Սովետական գրող» հրատ.:
9. **Մելիք-Բախշյան Ս. (1960)**, Հայաստանը VII-IX դարերում, Երևան, «Միտք» հրատ.:
10. **Պատմություն Սեբեոսի (1979)**, աշխատասիրությամբ Գ.Վ. Աբգարյանի, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ.:
11. **Սամուել Անեցի (2011)**, Հաւաքմունք ի գրոց պատմագրաց յաղագս գիտի ժամանակաց անցելոց մինչեւ ի ներկայս ծայրաքաղ արարեալ, Երևան, «Նաիրի» հրատ.:
12. **Սասնա Շոեր (2008)**, Հայ ժողովրդական վեպ, ընտիր պատումներ, Երևան, <<Էդիտ պրինտ>> հրատ.:
13. **Սասունցի Դավիթ (1977)**, Նոր պատումներ, Երևան, <<Սովետական գրող>> հրատ.:

14. **Ստեփանոս Տարոնեցի Ասողիկ (2000)**, Պատմություն տիեզերական, Երևան, ԵՊՀ հրատ.:
15. **ՏերՂևոնդյան Ա. (2003)**, Հոդվածների ժողովածու, Երևան, Երևանի պետական համալսարանի հրատ.:
16. **ՏերՂևոնդյան Ա. (1996)**, Հայաստանը VI-VIII դարերում, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ.:
17. **Օրմանյան Մ. (2001)**, Ազգապատում: Հայ ուղղափառ եկեղեցւոյ անցքերը սկիզբէն մինչեւ մեր օրերը յարակից ազգային պարագաներով պատմուած, հատ. Ա, Էջմիածին, Մայր աթոռ Ս. Էջմիածնի հրատ.:
18. **Ислам. Энциклопедический словарь (1991)**, Москва, “Наука”.
19. **Al-Baladhuri A.(1983)**, Kitab Futuh al-Buldan, Bairut, maktabatu "Hilal".
20. **Hubshman H. (1875)**, Geshichte Armeniens und der ersten Kriege des Araber aus dem Armenishen,des Sebeos, Leipzig, Publisher Breitkopf und Hartel.
21. **Ibn al-Athir (1987)**, Al-Kamil fi al-Tariqh,III, Kahira, dar al-Kutubi al-ilmiya.
22. **Qhronique de Denus de Tell Mahre (1895)**, quatrieme partie Paris, Libraire Emile Brouillon Editeur.
23. **Markwart H. (1930)**, Sudarmenien und die Tigrisquellen nach griechen und arabishen Geographen, Vienne, Publisher Mechitaristen Buchdruckerei.

REFERENCES

1. **Abeghyan M. (2013)**, Erker /Works/, vol 1, Yerevan, Yerevan State University Publishing House.
2. **Arabic Sources (1981)**, Ibn-Al-Asir /Translation, foreword and introduction by Aram Ter-Ghevondyan/, vol. B, Yerevan, Publishing House of the Academy of Sciences of the Armenian SSR.
3. **Arabic Sources (2005)**, Arab matenagirner, T'-ZH darer /Arab Manuscripts, 10th-12th Centuries/ /Introduction and translation from the original by Aram Ter-Ghevondyan/, vol. G, Yerevan, Yerevan University Press.

4. **Tovma Artsruni ew Ananun (1985)**, Patmowtyown Tann Artsruneac /History of the House of the Artsrunik, Yerevan, Yerevan State University Publishing House.
5. **Hay Zhoghovrdi patmowtyown /Hisrory of Armenian people/ (1984)**, vol. 2, Yerevan, National Academy of Sciences of Armenia Publishing House.
6. **Harutyunyan H. (1940)**, Sebeos episkoposi patmowtean mej eghats mi paymanagri zhamketi chshtman harci shurj, /On the issue of clarifying the date of a treaty in the History of rhe Bishop of Sebeos/, Scientific works, vol. 1, p. 199-205, Yerevan, Yerevan Pedagogical Institute Publishing House.
7. **Hovhannes Draskhanakertsi (1996)**, Hayoc patmowtyown, /History/, Yerevan, Yerevan State University Publishing House.
8. **Ghevond (1982)**, Patmowtyown /History/, Yerevan, "Sovetakan, grogh" Publishing House.
9. **Melik-Bachshyan S. (1960)**, Hayastany VII-IX-rd darerowm /Armenia in the VII-IX centuries/, Yerevan, "Mitk" Publishing House.
10. **Patmowtyown Sebeosi (1979)**, /Hisrory of Sebeos, Yerevan, National Academy of Sciences of Armenia Publishing House.
11. **Sasna Crer (2008)**, Hay zhoghovrdakan vep, yntir patumner /Sasnas curves.Aemenian volk novel, selected stories/, Yerevan, "Edit Print" Publishing House.
12. **Samuel Aneci (2011)**, Havakmownk i groc patmagrac yaghags gyuti zhamanakac anceloc minchev i nerkays cayrakagh arareal /Extracts from the works of historians for identifying chronology from ancient to present time/, Yerevan, "Nairi" Publising House.
13. **Sasunci Davit (1977)**, Nor patumner /Davit of Sasun, New stories/, Yerevan, "Sovetakan grogh" Publishing House.
14. **Stepanos Taroneci Asoghik (2000)**, Patmowtyown tiezerakan /The Universal History/, Yerevan, Yerevan State Unibersity Publishing House.

15. **Ter-Ghevondyan A. (1996)**, Hayastany VI-VIII darerum, /Armenia in the VI-VIII centuries/, Yerevan, National Academy of Sciences of Armenia, "Science" Publishing House.
16. **Ter-Ghevondyan A. (2003)**, Hodvacneri zhoghocu, /Collection of articles/, Yerevan, Yerevan State University Publishing House.
17. **Ormaniyan M. (2001)** Azgapatum. Hay owghghapar ekeghecoy ancqery skzben minchev mer orery` yarakic azgayin paraganerov patmvac /History of nation. The events of the Armenian Ortodox church from the beginning to the present days are told with related national circumstances/, vol 2, Etchmiadzin, Mother See of Holy Etchmiadzin Publishing House.
18. **Islam. Entsiklopedicheskiy slovar' /Islam. Encyclopedic Dictionary/ (1991)**, Moscow, "Nauka".
19. **Al-Baladhuri (1983)**, Kitab Futuh al-Buldan, Bairut, maktabatu "Hilal".
20. **Hubshman H. (1875)**, Geshichte Armeniens und der ersten Kriege des Araber aus dem Armenischen des Sebeos, Leipzig, Publisher Breitkopf und Hartel.
21. **Ibn al-Athir (1987)**, Al-Kamil fi al-Tarikh, ,vol 3 Kahira, dar al-Kutubi al-ilmiya.
22. **Chronicle de Denus de Tell Mahre quatrieme partie, (1895)**, Paris, Libraire Emile Bouillon Editeur.
23. **Markwart H. (1930)**, Sudarmenien und Tigrisquellen nach griechen und arabischen Geographen, Vienne, Publisher Mechitaristen Buchdruckerei.

Գայանэ Մկրտումյան

Попытка изучения исторических истоков семилетней хараджа

в эпосе "Сасна Црер"

Заклучение

***Ключевые слова и выражения:** семилетний харадж, договор 652 г., восстания Сасуна и Тарона, Мсра Мелик, Армянский князь, арабские сборщики, монастырь св.Марута, рукописи истории Себеоса, армянский эпос, налоговая политика.*

Предметом изучения данной статьи является тема семилетнего налога хараджа взимаемого с жителей Сасуна по приказу Мелика Мисра в эпосе "Сасна Црер". Последнее, по видимому, имеет историческую основу и связано своими корнями с договором подписанным в 652г., между Армянским князем Теодором Рштуни и ассирийским наместником Муавией Абу Суфьяном. В рамках статьи кратко рассматриваются арабские вторжения в Армению в второй половине 7-го века, борьба и политическая деятельность Теодора Рштуни. В статье на основе сведений армянских и арабских историков также проанализируются восстания Сасуна и Тарона против налоговой политике Арабского халифата вспыхнувшие в 9-го века. Халиф Джафар Мутаваккиль потребовал у Баграт Багратуни, князя Сасуна и Тарона налоги и отправил туда своих сборщиков. Параллельно с этим эпизоды эпоса освещаются акцентом на условий договора 652г, согласно которому армяне освобождались от уплаты хараджа Халифата на 3 года. Целью статьи является рассмотрение и анализ замечаний ряд армянских исследователей и историков относительно даты подписания договора и пересмотра условия освобождения армян от налогов в пределах не 3-летнего, а 7-летнего срока. И на основании этих наблюдений можно настаивать, что, упоминание в эпосе о неуплате армянами хараджа Мелику Мисра в течении 7 лет, является историческим воспоминанием договора 652г.

Gayane Mkrtumyan

AN ATTEMPT TO STUDY THE HISTORICAL ORIGINS OF THE SEVEN-YEAR
KHARAJ
IN THE EPIC "SASNA TSRER"

Conclusion

Keywords and expressions: 7 years of kharaj, treaty of 652, rebellions of Sasun and Taron, Msra Melik, the Armenian prince, Arab taxcollectors, St. Maruta monastery, manuscripts of the history of Sebeos, armenian epic, taxation politics.

The subject of this article is the seven-year tribute of kharaj, levied from residents of Sasun by order of Msra Melik in the epic "Sasna Tsrer". The latter, most likely, has a historical basis and is connected with the treaty signed in 652 between the Armenian prince Theodore Rshtuni and Assurian governor Muawiya Ibn Aby Sufyan. The article briefly examines the Arab invasions of Armenia in the second half of the 7th century, the struggle and political activities of the prince Theodore Rshtuni. The article analyzes the rebellions that broke out in Sasun and Taron in the 9th century against the tax policy of the Arab Caliphate, based on information provided by Armenian and Arab historians, which were reflected in the epic. Caliph Jafar Mutawakkil demanded taxes from Bagarat Bagratuni, the prince of Sasun and Taron and sent his taxcollectors there. In parallel with all this, the episodes of the epic are illuminated by emphasizing the terms of treaty of 652 according to which the Armenians were exempted from paying taxes to the Caliphate for 3 years. The purpose of the article is to present the observations and analysis of a number of Armenian researches and historians regarding the date of signing of the treaty and the revision of the condition of Armenians being exempt from taxes for 3 years, placing it not within 3 years, but within 7 years. And based on these observations, it can be argued, that the mention in the epic of the Armenians not paying tribute of kharaj to Msra Melik for 7 years is a historical memory of the terms of treaty of 652.

Գայանե Մկրտումյան – Երևանի պետական համալսարանի արևելագիտության ֆակուլտետի արաբագիտության ամբիոնի դոցենտ, պատմական գիտությունների թեկնածու: Գիտական հետաքրքրությունները՝ միջնադարյան արաբական պատմագրություն և մշակույթ, հայ արաբական հարաբերություններ: Հեղինակ է շուրջ 36 հոդվածի, մեկ մենագրության: gmkrtumyan@ysu.am

Гаяне Мкртумян - Кандидат исторических наук, доцент кафедры арабистики, факультета востоковедения ЕФУ. Сфера научных интересов: средневековая арабская

историография и культура, авмянско-арабские отношения. Автор около 36 статей, одной монографии. gmkrtumyan@ysu.am

Gayane Mkrtumyan - PHD in Historical sciences, Associate professor of the Chair of Arabic Studies of the Faculty of oriental studies at YSU. Scientific interest: Medieval Arabic historiography and culture, Armenian - Arab relationships.

gmkrtumyan@ysu.am

Խմբագրություն է ուղարկվել 28.02.2026թ.

Հանձնարարվել է գրախոսության 15.03.2026թ.

Հրապարակման է ներկայացվել 31.07.2026թ.